

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՆՈՐԱՅՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԾՈՎԱԿԱՆ

« Թ Ո Ւ Ղ Թ Ա Ռ Յ Ի Զ Տ Ի Բ Ո Ւ Զ Տ »

Սերաստիո Ս. Նշան վանուց հայերեն ձեռագրաց ցուցակին մեջ, զոր կազմած է Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյան, և որ լույս տեսավ Վիեննա, 1961-ին, թիվ 156 ձեռագրին առնչությամբ կա ծանոթություն մը Հ. Ն. Ակիւնյանե, ուր կըսվի. «Այս հատվածը, որ հայի Ս. Յիզտիբուզտի վկայաբաբնության և Պետրոս Սյունյաց եպիսկոպոսի, այլուստ անծանոթ է. այս պատճառով ցանկալի է հրատարակել զայն, եթե տակավին պահված է ձեռագիրս ի թիվս այն ձեռագիրներու, որոնք հասած են Երուսաղեմ» (էջ 107):

Վերոհիշյալ ձեռագիրը, որ արժեքավոր ժողովածու մըն է, կգտնվի այժմ Ս. Հակոբյանց ձեռագրատան մեջ, 3325 թիվին ներքև: Ակնարկված գրութունը կտեսնվի 442—443 էջերուն վրա: Ստորև կներկայացնենք հազվագյուտ այս գրվածքը, որ պատվական նշխար մըն է Զ դարու հայտնի մատենագիր՝ Սյունյաց Պետրոս եպիսկոպոսին գրչեն:



Պետրոսի Սունեաց եպիսկոպոսի առ Սուրբն Յիզտիբուզտի յորժամ ի հանդի էր ի Դվին:

Անհետազօտ ելեալ ծովու նաւաստի, ի խորոց ի վեր բերեալ մարգարիտ, մշակութեան Հօր հասկ, Բանին Որդուլ ուռ, էակից Սուրբ Հոգւոյն ծնունդ, ըստ պօղոսական ձայնին

օգնել ի յաշխարհի, երկնաւոր կոչմանն բաժանորդ, մանաւանդ թէ ըմբռնեալ իսկ ի վկայ շարչարանացն Քրիստոսի, տէր Յիզտիբուզիտ:

Պետրոս կրտսեր ամենայն եպիսկոպոսաց խոնարհեալ ի հեռուստ հպավորաբար առ ոտս տեառն զեկուցանէ ողջոյն:

Վատրաստութեան շափով շափեցար զմեզ. թէպէտ և փառաւորեցաւ Քրիստոս ի մարմինս ձեր, անարժանք ի մօտոյ՝ բացուստ ի բաց մեծ միջոցաւ անջատեալք, ընդ աղօտ զաղօթից ձերոց նշմարեմք նշոյլս. առ ձեզ զօրացեալ պարծանք, և զմեզ յաղթահարէ ակնակորութիւն:

Արդ որք առաջադէմսդ նկրտիք, քաջ նահատակք և զրահազգեստք, վահանաւորք, պատենազէն սաղաւարտեալք, ի նիզակախուռն գումարութեանդ, յորում յաղթութեան ձերում կանգնի նշան տէրունի, յիշեսջիք և զմեզ զմերքս, և զապա(յ)զէնս, և զընդ ամենայն ախտիւ անկեալ, փրկել ի գերութենէն թշնամւոյն, և ազատել ի ծառայութենէ ախտից ի վերայ յարուցելոց: Որպէս կա[յ]ցե՛ գրով գիտել տա(ն)ջիր:



Պատմական պարագանելու: հիման վրա, նամակիս գրության թվականը կրնա դրվիլ 549—553 տարիներուն միջև:

